Հաստատում եմ:

2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ս. Շահմուրադյանի անվ հ.85 հիմնական դպրոցի մանկավարժական խորհրդին

2022-2023 ուստարվա ուսումնական աշխատանքների մասին

Հաշվետվություն

2022-23 ուստարվա սկզբին կոմպլեկտավորվեց 9 դասարան, որոնցից 4 դասարան՝ տարրական դպրոցում, 5 դասարան՝ հիմնական դպրոցում : Տարեսկզբին դպրոցում սովորում էր 189 աշակերտ:

Ձևավորվեց երեք մեթոդմիավորում, նշանակվեցին մ/մ նախագահներ.

«Տարրական կրթություն» ՝Ա. Եգանյան

«Հումանիտար»՝Վ. Խաչատրյան

«Բնագիտամաթեմատիկական»՝ Մ. Առաքելյան

Մեթոդմիավորման նախագահներին հանձնարարվեց կազմել և ներկայացնել տնօրենի հաստատմանը մ/մ-ների ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան-ծրագրերը: Հանձնարարվեց առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան կազմել թեմատիկ ծրագրերը՝ պահպանելով ծրագրային կառուցվածքը: Թեմատիկ ծրագրերը քննարկվեցին մ/մ-ան նիստերին , ստուգվեցին փոխտնօրենի կողմից և ներկայացվեցին տնօրենի հաստատմանը:

Մ/միավորումների նիստերին քննարկվեց օրվա դասի պլանի հարցը, որոշեցին ներկայանալ օրվա դասի պլանով:

Օգոստոսի 28-ին կատարվեց 2022-2023 ուստարվա վերջնական դասաբաշխումը: 2022-2023 ուստարվա ուսպլանով նախատեսված դպրոցական բաղադրիչի ժամաքանակը բաշխվեց հետևյալ առարկաների մեջ՝ <<Ազգային երգ ու պար>>, <<Հայոց լեզու>>, <<Հայրենագիտություն>>, <<Աշխարհագրություն>>, <<Հայոց պատմություն>> և <<Մաթեմատիկա>> առարկաներին:

Համաձայն դպրոցի կանոնադրության ՝2022-2023 ուստարում ձևավորված 9 դասարանների համար նշանակվեցին դասվար, դասղեկներ:

2022-2023 ուստարվա դասացուցակը և ըստ դասացուցակի դասասենյակների բաշխումը պատրաստ է եղել օգոստոսի 28-ին: Մեթոդմիավորման նիստերից հետո կազմվել է ժամանակացույցը, ՀՄԱ խմբի աշխատանքային կարգացուցակները:

Բոլոր ուսուցիչները ստացել են մեթոդական ցուցումներ մատենավարության, ուսուցանող և միավորային գնահատման շուրջ:

Հաստատվել է տարիֆիկացիան:

Կազմվել են բոլոր առարկաների առարկայական տասնօրյակների, շաբաթների գրաֆիկները:

1-ից 4-րդ դասարանների դասագրքերը աշակերտներին տրվել են անվճար:

Սեպտեմբերի 1-ին երեխաները ներկայացել են դպրոց դասացուցակով և դասագրքերով: Գիտելիքի օրը դպրոցը նշեց մեծ շուքով : Առաջին դասարանցիների

նորամուտը գեղեցիկ կազմակերպեց դասվար Ս. Բեգոյանը և անցկացրեց <<Գիտելիքի օրվան>> նվիրված դասը:
Կազմվել է օլիմպիադաների դպրոցական փուլի գրաֆիկը: Հանձնարարվել է մ/մ նախագահներին կազմել հարցաշարերը կամ թեստերը՝ օլիմպիադաները անցկացնելու համար:
Ամեն օր ստուգվել են աշակերտների հաճախումները, դասասենյակների մաքրությունը:
Տնօրենության կողմից կազմակերպվել է մայրենիի դրվածքի ուսումնասիրություն 4-րդ դաս.՝ նոյեմբերի 14-30-ը, կատարվել են ստուգիչ դասալսումներ տնօրենության կողմից 4-րդ դասարանում, որը եզրափակվել է ստուգողական աշխատանքով՝ թեստով:Արդյունքները ամփոփվել են մ/մ նիստում:
Նոյեմբերի 18-ից դեկտեմբերի 9 -ը պետք է ուսումնասիրվեր <<Անգլերեն>> առարկայի դրվածքը, սակայն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից ելնելով այն տաղափոխվեց 2-րդ կիսամյակ: Գործնական աշխատանքների կատարման ընթացքում ուսուցիչները կարևորում են երեխայի ձեռք բերած կարողությունների և հմտությունների կիրառումը առօրյա կյանքում:
Հոկեմբերին 9-րդ դասարանում ստուգվեցին աշակերտների մնացորդային գիտելիքները <<Հանրահաշիվ>> և <<Երկրաչափություն>> առարկաներից:
Նոյեմբերին 9-րդ դասարանում ստուգվեցին աշակերտների մնացորդային գիտելիքները <<Հայոց լեզու>> և <<Գրականություն>> առարկաներից:
Դեկտեմբերին 9-րդ դասարանում ստուգվեց աշակերտների մնացորդային գիտելիքները <<Քիմիա>> առարկայից:
Իսկ դեկտեմբերի 3-16-ը կազմակերպվել էր հայոց լեզվի և գրականության դրվածքի ուսումնասիրություն 7-րդ,8-րդ և 9-րդ դասարաններում:Տնօրենության կողմից դասալսումներ կատարելուց հետո անցկացվեցին ստուգողական գրավոր աշխատանքներ. 7-րդ 8-րդ և 9-րդ դասարանում հայոց լեզվից՝ թեստ:
Հոկտեմբերին <<Ֆիզկուլտուրա>> առարկայից անցկացվեց ներդպրոցական մրցաշար ֆուտբոլից 8-րդ և 9-րդ դասարանների մասնակցությամբ:
Կատարվել են բազմաբնույթ դասալսումներ:
Տարրական դպրոցում իրականացվել է բարձրաձայն ընթերցանության տեխնիկայի ստուգում:
2-րդ կիսամյակում կոմպլեկտավորվեց 10 դասարան. տարրական դպրոցում՝ 4, հիմնական դպրոցում՝6:
Ըստ 3 մասնախմբերի ղեկավարների՝ հումանիտար, բնագիտամաթեմատիկական և գեղագիտական, տարրական, ներկայացրած զեկուցագրերի այդ աշխատանքները հիմնականում կատարված են:Կատարվել են դասալսումներ տնօրենության կողմից:
Կատարվել են փոխադարձ դասալսումներ բոլոր մասնախմբերում՝ դասղեկների և ուսուցիչների կողմից ու գրանցվել են դասալսումների մատյաններում, մասնախմբերի նախագահների հսկողությամբ: Ստուգվել են գրավոր աշխատանքների տեսակի և քանակի համապատասխանությունը՝ ծրագրով նախատեսվածի հետ: Բնագիտամաթեմատիկական առարկաներից 8-9-րդ դասարանի աշակերտները մասնակցել են առցանց օլիմպիադաների:Հումանիտար առարկաներից օլիմպիադայի ներդպրոցական փուլում

առավել բարձր միավորներ ստացած աշակերտները մասնակցել են տարածքային փուլին:9-րդ դասարանի աշակերտ Անդրեյ Միրզաբեկյանը «ՆԶՊ» առարկայից հաղթահարել է տարածքային փուլը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության բաժնի կողմից ՀՀ դպրոցականների 22-23թթ. ուստարվա «ՆԶՊ» առարկայից քաղաքային փուլում ցուցաբերած գնահատելի արդյունքի համար արժանացել է գովասանագրի /ուսուցիչ Վ. Սարիբեկյան/:

Տարեսկզբից գնացել են 22, եկել 23 աշակերտ, տարվա վերջում դպրոցում սովորում են 190 աշակերտ: Տարրական օղակում 2-րդ կիսամյակի սկզբում ունեցել ենք 81 աշակերտ, գնացել է 1, եկել՝ 2 աշակերտ: Կիսամյակի վերջում ունենք 82 աշակերտ՝ 40 աղջիկ, 42 տղա: Գնահատված են 70 աշակերտ, բացի առաջին դասարանցիներից /9 աշակերտ/ և 200 դասաժամից ավել բացակայություն ունեցող հետևյալ 3 աշակերտից՝ 4-րդ դասարանի աշակերտ Նարեկ Մաթևոսյան /322դասաժամ/, 3-րդ դասարանի աշակերտներ Մելիքսեթյան Մերի /388 դասաժամ/ և Սարգսյան Էրիկ /632 դասաժամ/:

2-4-րդ դասարաններում ուսման մեջ հետ մնացող աշակերտներ չկան:
Բացակայությունների թիվը կիսամյակի ընթացքում 1736 դասաժամ է: Միջին դպրոցում՝ 5-9-րդ դասարաններում, 2-րդ կիսամյակի սկզբում ունեցել ենք 109 աշակերտ, գնացել է 6 աշակերտ, եկել՝5-ը: Կիսամյակի վերջում 108 աշակերտ ունենք, որոնցից 45-ը աղջիկ, 63-ը՝ տղա: Ունենք 7 գերազանցիկ և 21 հարվածային աշակերտ: 200 և ավելի դասաժամ բացակայություն ունենալու պատճառով հետևյալ աշակերտները մնում են նույն դասարանում՝ դասընթացը կրկնելու.

2022-2023 ուստարվա ընթացքում ուսուցման որակի ստուգման նպատակով կատարվել են վերահսկողական աշխատանքներ տարբեր ուղղություններով

1. ***Տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքներ***– 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում տրվել են տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ 3-րդ, 4-րդ, 8-րդ և 9-րդ,դասարաններում «Մայրենի», «Մաթեմատիկա», «Հայոց լեզու», «Հանրահաշիվ, Երկրաչափություն» առարկաներից:Կազմվել է համապատասխան հաշվետվություն/վերլուծություն:Նշված դասարանների ընտրությունը պայմանավորված էր նրանով, որ 4-րդ և 9-րդ դասարանները քննական դասարաններ են, իսկ 3-րդ և 8-րդ դասարանները՝ նախաքննական, ինչը թույլ կտար ուսուցչին ժամանակին ներմուծել շերտավոր ուսուցում և սովորողներին նախապատրաստել գիտելիքի ստուգմանն ու քննություններին:
2. **4-րդ դասարանի գիտելիքի ստուգում**– 2023թ. հունիսի 8-15-ն ընկած ժամանակահատվածում անցկացվել է գիտելիքների ստուգում 4-րդ դասարաններում ընդգրկված սովորողների համար «Մայրենի», «Մաթեմատիկա»4-րդ դասարանում անբավարար գնահատականներ չկան:
3. ***9-րդ դասարանի ավարտական քննություններ*** – 2023թ. հունիսի 5-26–ը ընկած ժամանակահատվածում անցկացվել են ավարտական քննություններ 9-րդ դասարանի սովորողների համար «Հայոց լեզու», «Գրականություն», «Մաթեմատիկա», «Բնագիտություն», «Հայոց պատմություն», «Օտար լեզու», «Ֆիզկուլտուրա»:9-րդ դասարանում՝ 1 աշակերտ ստացել էր անբավարար գնահատական, հաձնեց վերաքննություն:
4. ***Դասալսումներ*** – 2022-2023 ուսումնական տարում ուսման որակի վերահսկման նպատակով կատարվել են բազմաթիվ դասալսումներ բոլոր մեթոդական միավորումներում: Հաստատված ժամանակացույցով յուրաքանչյուր միավորման հատկացվել է 2 շաբաթ: Դասալսումները հետապնդել են բազմաթիվ նպատակներ՝ ըստ յուրաքանչյուր առարկայի յուրահատկության: Յուրաքանչյուր դաս քննարկվել է ուսուցչի հետ, վեր են հանվել ուժեղ և թույլ կողմերը: Դալասման ժամանակ ուշադրություն է դարձվել ընթացքի, նպատակի, վերջնարդյունքի, սովորողների վարքագծի, մասնակցության աստիճանի,

Վորող-սովորող կապի, շերտավոր ուսուցման և խմբային աշխատանքների վրա: Գրեթե բոլոր ուսուցիչներին տրվել է հանձնարարական դասը պլանավորել և իրականացնել՝ հաշվի առնելով վերը նշված կետերը: Ստուգվել է նաև օրվա դասի պլանի առկայությունը, ինչը երբեմն բացակայել է: Եղել են հաջողված, ավանդական մեթոդներով, ժամանակակից մեթոդներով և, իհարկե, ձախողված դասեր: Բազմիցս արվել են համապատասխան դիտարկումներ, տրվել են առաջարկություններ և հանձնարարականներ: Դասալսումներ կատարվել են ոչ միայն տնօրենության, այլև մեթոդական միավորումների նախագահների և անդամ-ուսուցիչների կողմից: Դասալսումները կրել են կառուցողական բնույթ, որոնց նպատակն է եղել իրականացնել փորձի փոխանակում, աջակցել միմյանց և ակնհայտ դարձնել հաջողված կիրառությունները, իսկ սկսնակ ուսուցիչների մոտ՝ մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով: Ակտիվ դասալսումներ են իրականացվել նաև պարտադիր ատեստավորված ուսուցիչների մոտ ստուգելու՝ արդյոք տիրապետում են նոր մեթոդներին, ՏՀՏ գործիքների կիրառությանը:

5. ***Մանկավարժական խորհրդի գործունեությունը*** – Մանկավարժական խորհրդի նիստերում քննարկվել են ուսումնադաստիարակչական աշխատանքներին առնչվող հարցեր, գնահատվել են հաջողությունները, արձանագրվել են բացթողումներն ու թերացումները: Մանկավարժական խորհրդի որոշմամբ հաստատվել են դասալսումների թերթիկը և հաստատվել ժամանակացույցերն՝ ըստ մեթոդական միավորումների: Բոլոր նիստերի ժամանակ քննարկվել է էլեկտրոնային մատենավարությունը, վեր են հանվել բացթողումները: Մատենավարությունն իրականացվել է առանց եռօրյա ժամկետը խախտելու: Մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ քննարկվել առարկայական օլիմպիադաների, տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքերի, ստուգարքների, գիտելիքների ստուգման և ավարտական քննությունների արդյունքները

6.2022-2023 ուստարվա ընթացքում ընդհանուր բացակայությունների թիվը կազմում է 8527 դասաժամ, կրթության որակը՝ 41.1%, առաջադիմությունը՝ 99,5%:

Աշխատանք սոցիալապես անապահով և դժվար դաստիարակվող սովորողների հետ

Դասղեկների օգնությամբ առանձնացվել են սոցիալապես անապահավով, միակողմանի ծնողազուրկ, բազմազավակ ընտանիքի երեխա հանդիսացող սովորողները: Մանկավարժական խորհրդիհամաձայնությամբ դպրոցի դասագրքերի ֆոնդից վերջիններիս դասագրքեր տրամադրվել են անվճար հիմքով համապատասխան փաստաթղթերի առկայության պարագայում:Միաժամանակ, հաշվառվել են նաև անցանկալի վարք ցուցաբերող և դժվար դաստիարակվող սովորողները, որոնց հետ տարվել են անհատական զրույցներ երբեմն նաև անչափահասների գծով տեսուչի ներգրավմամբ:

Համագործակցություն ծնողական խորհրդի (ԾԽ) և առհասարակ ծնողական համայնքի հետ

2022-2023 ուստարվա կարևոր ձեռքբերումներից էր նաև առողջ, կառուցողական և ակտիվ համագործակցությունը ԾԽ-ի և առհասարակ ծնողական համայնքի հետ: Ծնողական ժողովներ են հրավիրվել առնվազն 4 անգամ, իսկ խնդրահարույց դասարանների հետ՝ նույնիսկ ավելի շատ: Հակասոցիալական վարք ունեցող սովորողների ծնողների հետ տարվել են անհատական հանդիպումներ և զրույց-քննարկումներ: Բոլոր ձևաչափերով կազմակերպված ժողովներին ներկա է գտնվել ողջ վարչակազմը, դասղեկը, երբեմն նաև դպրոցի՝ անչափահասների գործերով տեսուչը:

Բազմամասնագիտական խմբի կատարած աշխատանքներ

Դպրոցում առանձնահատուկ կարևոր դերակատարում ունի բազմամասնագիտական թիմը, որի կազմի մեջ են մտնում հատուկ մանկավարժը, սոցիալական մանկավարժը, հոգեբանը, լոգոպեդը : Ավելորդ է նշել, թե որքան անհրաժեշտ է այս մասնագետների աջակցությունը սովորողների

ռահասության և նախադեռահասության տարիքին բնորոշ հոգեբանական և սոցիալական խնդիրներ աղթահարելիս, սեփական ես-ը ձևավորելիս, միջանձնային և ներանձնային խնդիրներ կարգավորելիս, ինչպես նաև լեզվական խնդիրներ լուծելիս: 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացվել է համընդհանուր ներառական ուսուցում կազմված ԱՈՒՊ-ներին համապատասխան: Թիմը աշխատել է նախապես կազմված դասացուցակին համապատասխան՝ անհատական աշխատանքներ իրականացնելով սովորողների հետ: Դասապրոցեսի ընթացքում եղել է աջակցություն ուսուցչին, նախապես գրված պլանին համապատասխան: Աջակցությունը եղել է կարիքից ելնելով և համագործակցելով ծնողների հետ, լսելով նրանց մտահոգությունները և առաջարկությունները: Ուստարվա ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ դասավանդող ուսուցիչների և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ծնողների հետ՝ նախապես կազմված ժամանակացույցին համապատասխան և կազմվել արձանագրություններ:

Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել է սեմինարներ, որի նպատակն էր ուսուցիչներին ծանոթացնել ԱՈՒՊ-ների վարման նոր կարգին: Իրականացվել է նաև ամենամսյա հանդիպումներ թիվ 3 ՏՄԱԿ-ից գործուղված մասնագետների հետ փորձի փոխանակման և մասնագիտական քննարկումների նպատակով: Յուրաքանչյուր ամիս հանդիպում է կազմակերպվել նաև ԿԱՊԿՈՒ սովորողների ծնողների և տնօրենի մասնակցությամբ:

Հատուկ մանկավարժը, հոգեբանը կազմակերպել են զրույց-քննարկումներ սովորողների հետ բազմաբնույթ թեմաներով: Ուսումնական ընթացքում նաև կատարվել են դասալսումներ, որոնց նպատակն է եղել պարզել սովորողների ուսումնական գործունեության և նրանց հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը:

- Ուսուցիչների մեծ մասը կիրառում է շերտավոր ուսուցում և կարող է կիրառել նոր տեխնոլոգիաներ, համադրել դասավանդման ավանդական և նոր մեթոդները:
- Ուսուցիչները համագործակցում են միմյանց հետ:
- Գրեթե բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն կրթություն՝ մանկավարժի որակավորմամբ:
- Ուսուցիչների ինքնազարգացման մոտիվացիայի պակաս, որը հիմնականում պայմանավորված է ցածր աշխատավարձով:
- Ժամանակակից մեթոդների, ՏՀՏ միջոցների ոչ լիարժեք տիրապետումը, ինչպես նաև դրանց հագեցվածության պակասը՝ որպես ուսումանական գործընթացի խոչնդոտ:
- Ուսուցիչների մեծ մասը կիրառում է շերտավոր ուսուցում և կարող է կիրառել նոր տեխնոլոգիաներ, համադրել դասավանդման ավանդական և նոր մեթոդները:

Տնօրեն՝ Ա. Սարգսյան